

Ո՞ւ բաժանորդ բախտի մարմնոյն լեալ հոգին  
Առաջեալ անկցի խոր ի գիշեր տապանին .  
Լուծցի փոշի . թէ՝ թես ի թիռս հոլանեալ  
Ջնդեսի յօդա՝ իբրեւ ըզձայն պակասեալ:  
Յետ սին հեծման , յետ գերագոյն հրաժեշտին  
Չիցէ որ զքեզ սիրէ յորոց սիրէին . . .  
Ո՛չ , յայդ խորհուրդ մեծ քեզ լոկ հարց դու խընդիր .  
Տես զսիրելսոյդ մահ , և տուր բան ով Լավիր :

## ԼԱՄԱՐԴԻՆ

## ԱԾԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխամպրա :

Հազիւ թէ 100 տարի անցեր էր  
Վահմէտին մահուանը վրայ , որ Արա-  
բացիները կարգաւորեալ ազգ մը ձեա-  
ցուց . Զ դարուն վերջերը սկսան անոնք  
բոլոր աշխարհքիս տիրելու ազք տնկել:  
Խումբ մը բազմութիւն մեկնեցաւ Ա-  
սիայէն , և հետզհետէ այլ և այլ ցե-  
ղերէ շատնալով , Հռովմէական Աֆրի-  
կէին ալ իշխեց : 714ն Խմբէս-լա-  
ֆրօնթէրայի յաղթութեամբը , Ապա-  
նիա բաց էր անոնց առջեւը . և իրեք տա-  
րիէն վերջը տիրեցին ամբողջ տէրու-  
թեանը , ինչուան Պիրեննեան լեռները ,  
և մնաց միայն ան այրը ուր որ Ապանիա-  
կան Կոթայցոց դիւցազնը Պիեղագիոս  
ամրացաւ : Պրեթէ 800 տարի գնաց ին-  
չուան որ անիկայ իշխանութիւն մը ձե-  
ւանայ . բայց ետքէն Արուրոս հինգե-  
րորդին զօրանալուն և անոր թագաւո-  
րութեանը պատճառ եղաւ : Ա եղջա-  
պէս ԺԵ դարուն վերջերն Փերդինան-  
դոս և Խղապելլա Արանատայի տիրե-  
ցին , որ Պոպապտիլ՝ Ապանիա եղող  
Աւրիտանացւոց թագաւորին վերջին  
մայրաքաղաքն էր , ու հոն քրիստոնէու-  
թիւնը տարածեցին : Այն միջոցներուն  
Ապանիոյ Արաբացիները նաև Կաղղիոյ  
վրայ ալ յարձըկեցան , բայց Արուրոս-  
Արդէլ յաղթեց Ապտէրահմանին և  
նթագքնին արգիլեց :

Ապանին Արաբացիք և դարուն ըս-  
կիզեները , երբոր զօրաւոր երևակայու-  
թեամբ մը և իրենց Պ ուրանին աշ-  
խուժով վառուած էին , որն որ մեծ կը  
համարէր Յանկութիւնը ու Պատե-  
րազմը , կամ թէ ըսենք իրենց այնչափ  
ըրած աշխարհակալութիւններուն ե-  
ռանդեամբը քաջալերուած էին , տիրե-  
ցին Ապանիոյ , և երկրին հրաշալեացը  
և կլիմային գեղեցկութեանը սքանչա-  
ցած , հոն զէնքերնին դադրեցուցին ,  
որպէս զի իրենց ըրած աշխարհակա-  
լութիւններուն պտուղը վայելէն . և  
այն ատենէն սկսաւ իրենց լրսաւո-  
րութեան դարը : Այ նորանոր փոփո-  
խութեամբք մէկէն ընկերութիւններ  
և քաղաքականութեան բողբոջներ մէ-  
ջերնին երևցան . և այն ազգն որ ին-  
չուան նոյն ատեն անապատներու և  
միայն պատերազմի դաշտաց մէջ տես-  
նուած էր , ու բարբարոս կը սեպուէր ,  
իր բարեմասնութեամբը և ուսմանց ու-  
նեցած յարմարութեամբ յայտնապէս  
ցըցուց թէ որչափ մեծ տպաւորութիւն  
ունի մարդուս սրտին վրայ կրթութիր :

Աեւիլիոյ , ԱՅորտովայի և Արանա-  
տայի Աւրիտանացիներն՝ որոնք իրա-  
րու հետ անհամբոյր , և իրենց վրէժ-  
ինդրութեանը մէջ անողոքելի էին ,  
վտանգաց մէջ կտրձութիւննին կ'ու-  
զէին ցուցընել , և մարմնոյ և ուժոյ  
կրթութիւնները ամէն բանել վեր կը  
սեպէին , կարծէս թէ անկէ վերջը  
միայն փառաց և հաճոյից համար կ'ագ-  
ըէին : Արաբացւոց կրօնքը և սովորու-

թիւնները գրեթէ բոլորովին կերպարանափոխ եղան այն նոր օրինաց հետեւելով, և նորանոր բաներու հարկաւորութիւն ունենալիքին տեսնելով՝ գիտութեանց և արուեստից գտողք եղան։ Երենց արեւելեան վառվրուուն ոգուզը ձեռք զարկին ամենայն տեսակ արուեստից, և մէկէն առջի քայլերնուն ցըցուցին ապագայ յառաջադիմութիւննին։ Ապանիոյ մէկ կողմը աւանդութեամբ դեռ ինչուան հիմայ կը պահուին մշակութեան այն օրէնքները, որով որ իրենք ասիական բոյսերը փոխադրեցին։ գարձեալ ան ոռոգման ջրանցքները որոնք իրենց ձեռքովը փորուած են, անքեր գաշտերը հիմա ալ դեռ կը պտղաբերեն։ Երբ բոլոր Եւրոպա նոր կ'իմանար թնդանօթ գործին, իրենք շատոնց Ալիւսիրի պարիսպքը գնդակոծելու գործածեր էին. իրենք եղան գարձեալ առաջին որ բամբակէ թղթի վրայ գըրել սկսան։ Առաջ գեղարուեստները մշակեցին, որոնք լուսաւորեալ ազգի մը վրայ մեծ ազգմունք ունին, և ազգաց յառաջադիմութեանը մեծապէս նպաստաւորք են։ Արաբացին, ինչպէս որ առաջ ալ ըսինք, միայն վայելելու համար Ապանիոյ մէջ կեցաւ, և իրեն վայելմունքը կատարեալ ընելու ամէն ջանքը բանեցուց։ Եւ որովհետեւ կենդանի և փափուկ երեւակայութեան տէր է, և պատերազմասէր եռանդան հետ գիտութեանց և հաճոյից սէրը շաղկապած, մէկէն նուագածութիւնը և ճարտարապետութիւնը Արանատայի ու Քորտովայի մէջ զարգացան։ և այս երկու քաղաքները իրենց պայծառութեան ժամանակ՝ միջին դարուց մէջ անանկ էին, ինչպէս Աթէնք և Հռովմշին ատեն, և Եւրոպայի ամէն կողմերէն հօն կը վազէին։ Հասարակաց գըրատուններ բացուեցան, երաժշտութեան գլեր շինուեցան, յիշատակարաններ կանգնուեցան։ Վիայն թեթև մատենագրութիւնը պատիւ գտաւ մէջերնին. վասն զի զուարձութիւն սիրելը յատուկ բարքն էր Ապանիական Արաբացւոց. իրենց պէս ազգ մը եղած չէ որ մտածու-

թեան գաղափարնին յայտնի ցըցուցած ըլլան նսեւ գործողութեանց մէջ. բնաւ ազգ մը չէ թօղուցած այնպիսի յիշատակարաններ որոնք հաւաստեաւ ու որոշ կերպով նշանակեն իրեն յառաջադիմութե գրեթէ ամէն մէկ քայլը։ Եթէ Երակատուի բուրգերը, Փլաւեան ամփիթէատրոնը 'ի Հռովմշ, և հնութեան ուրիշ այնչափ շնչքերը ընդհանուր պատմութեան մէջ երեսներ գրաւած են, զանոնք շինել տուող թագաւորաց մեծութիւնը ու հարստութիւնը ցուցընելու, Ալիչամպրայի պալատներն ալ անմահ յիշատակներ են Ապանիայի Արաբացւոց. հօն կը տեսնուի իրենց հանձարոյն կնիքը, իրենց բարքը, և կենաց պատկերը։



Ալիամպրա.

Ալիչամպրա կամ Արմիր քաղաքը, որ ընդհանրապէս կարմիրգոյն աղիւսներէ շինուած ըլլալուն համար այս անոնը առած է, Արանատայի մէկ ծայրը կ'իջնայ, և այնպիսի բլոյ մը վրայ կը հանդշէ, ուսկից կը վազէն Խէնիլ և Տարբոյ գետերը, և չորս կողմը կը պատէ Ակայի գեղեցիկ գաշտը, որուն գեղեցկութեանը վրայ սքանչացած։ Աւրիտանացիք կ'աւանդէին թէ այն դաշտին վրայ եղող երկնքի մասին մէջ է իրենց մարգարէին բնակութեան տեղը։ Հարիւր տարսւան մէջ անբաւ գանձ գործածուեցաւ (ՃԳ դարէն ինչուան ՃԴ) ասոր շինութեանը համար, վասն զի Ալիչամպրայի պալատը 2,500 ոսք երկայնութիւն, և 650 լայնութիւն ունի, և 40 հազար մարդ կրնան մէջը բընակիլ։ Աչ միայն զուարձութեանց համար կտուցուած ամարատան մըն էր,



### Աշխամպրայի Առիշնոց գարիբը .

այլնաև ապահովութեան բերդ մը քաղաքական խռովութեանց դէմ, որոնք շատ անգամ հանդիպելով, արաբացի իշխանաց վայելքը ու հանդարտութիւր տակնուվրայ կ'ընէին . անոր համար հարկ էր Աշխամպրայի պալատին արտաքուստ զօրութիւն և պատերազմական երեսոյթ մը տալ, ինչպէս կը տեսնուի քաղքին մեծ գունէն ալ . մինչդեռ ներքին կողմը վայելց և հեշտութեան զբուարան մըն էր : Պալատին չորս կողմի պատերը մութ կարմրագոյն էին, բարձր և թանձր պարիսպներով, մեծ ու ահաւոր դղեակներով ու աշտարակներով զինաւորուած . իսկ անոնց ետեր պալատներ ու զուարձութեանց պարտէցներ : ||' ենք այս համառօտ ստորագրութիւնս ընելու ատեն՝ չենք կը քարնար կանոնաւոր կերպով մը աւանդել

1 Աշխամպրայի վրայ Օրտդրիս մէջ արդէն ուրիշ անգամ ալ համառօտ տեղեկութիւն մը դրած ենք . Հատ . գ . էր . 219 :

այն հրաշալեաց նկարագիրը, որոնց բազմութիւնը խելքէ մոքէ վեր կ'երևայ : Հոս կային այնպիսի պալատներ, որոնց յատակը ճերմանկ մարմարինէ էր, և չորս կողմերնին պատիկ սրահակներ, որոնք թեթև սիւներու վրայ հաստատուած էին, արմաւենւոյ Ճիւղելուն պէս օդուն մէջ . անոնց մէջտեղները աղբիւրներ կը բղխէին, որոնց մաքուր ջուրը մարմարիններուն վրայ վազելով՝ ընդարձակ աւազաններու մէջ բաժնուելին ետքը այլ և այլ տեղեր կը տարածուէին . անդին գեղեցիկ ծառեր, և զանազան գաւառաց և կլիմայից հոսաւէտ բոյսեր . ու կամարակապ ճամբաներուն տակ, Ճոխ և ամենազեղեցիկ ոճով շինուած անթիւ սենեակներ կը տեսնուէին, յատակնին բոլոր մարմարինէ, պատերը խեցեղէն անօթներու կտորուանքներէ շինուած, որոնք իրենց լուսաւոր ճառագայթներովը մարդուս աչքը կ'առնէին . բարձր զմբէթներուն

վրայ ասդիս անդին քանդակներ ու այլ և այլ նկարներ կը տեսնուեին, նման հնդիային կերպասուց վրայ երեցած զարդերուն։ Ի՞ն ամենագժամանակուած և հանձարեղ արուեստին մէջ յայտնի կ'երենար նաև գունոց գեղեցկութիւնը։ և ամէն տեղ շինողը կարծես թէ զարմանալով ըրածին վրայ, և սաստիկ սիրով յարուելով այն տեղերուն, ոտանաւորներ ու վիապասանութեանց կտորուանք և ուրիշ խօսքեր ՚ի գովեստ Ի՞ստուծոյ, ՚ի պատիւ Արաբացւոց ազգին և ԱլՀամզրայի քանդակել տուած էր։ Ի՞ն սենեակներէն մէկ քանդին խիստ ընդարձակ և փառաւոր էին, արեւելեան թագաւորի մը արքունիք սեպուելու արժանի տեղուանք, կամ աւելի լաւ ըսենք՝ առասպելաց մէջ պատմուած զուարձութեանց տեղերուն նման։ ԱլՀամզրայի վրայ այս ընդհանուր տեսութենէն վերջը, կը մնայ մեզի առանձին մէկ քանի քան ալ յիշել որ աւելի զարմանալիներն են։

Դատաստարանի դուռը, — որն որ հիմա ԱլՀամզրայի մէծ մուտքն է, և կամարին հիմնական քարին վրայ կը տեսնուի գեռ ան այլաբանական նշանակը որով Արաբացիք ուզեր են իմացընել իրենց թշնամեացը թէ որչափ դժուար է ԱլՀամզրայի տիրել. ձեռք մը կը տեսնուի որ բալիքի մը կ'երկըննայ, ըսել ուզելով, որ ԱլՀամզրա թշնամեաց ձեռքը չմատնուիր, ինչուան որ բալիքով ըքացուի։

Աշխեծներու գատիթը. — որն ԱլՀամզրայի հրաշալեաց մէջ ամենէն զարմանալին է, և ասիկայ է մեր զբած պատկերին մէջ երեցածը։ Ի՞րիւծուց գաւիթ կոչուելուն պատճառը 12 առիւծներն են, որ ալաբաստրէ մէծ աւազան մը կը վերցընեն, ուսկից ջուրը բղխելով մարմարինէ յատակին վրայ կ'իյնայ։

Աղենիերածներու սրահը. — ուր որ նոյն ազնուական ցեղը սպաննուեցաւ Պատարտիւ թագաւորին հրամանովը, և ձերմակ մարմարիններուն վրայ արեան կարմիր նշանները գեռ ինչուան հիմայ կ'երեւան։

Ի՞րուրութեան սրահ. — որուն վրայ ասանկ գրուած է. Ո՞վ տիրութիւնը պահանջելուն, մի վախեր արդարութիւնը պահանջելուն, կը համնիս ուզածիդ ։



Աղենիերածներու սրահ.

Դատաստարաններուն սրահը, — յորում կեսարաց յաջորդներուն և կայսերական իշխանութեան խոնարհիլը տեսնուեցաւ Արաբացւոց իշխաններուն առջեւ։ Այս սրահին մէջն էր որ Արանսատայի վերջընթեր թագաւորը առ գեղեցիկ պատասխանը տուաւ սպանիացի ասպետի մը որ իրմէ վերդինսանսոսի և Խապել լայի անուամբը հարկ կը պահանջէր։ Անա ըսէ քու իշխանիդ որ Արանսատայի թագաւորները, որոնք Աստիլիոյ արքունեացը հարկ կը վճարէին, մեռան. այսօրուան օրս մեր զբամատեղին ուրիշ բան չի կոփեր բայց եթէ գերեզմաննոցին տախտակը, և նիզակին երկաթը ։

Բայրութ շրջապատը. — բլրին սեպացեալ գլխուն վրայ, որուն առջեւն է բոլը ԱլՀամզրայի տեսքը. իշխանական ընտանեաց բնակութեանը համար կը գործածուեր։

Դաղնանեաց սրահներ. — որոնք գրեթէ բոլոր ժայռերու մէջ փորուած էին, և ոսկին, մարմարինէ, ալաբաստր և պորտիկը քարերէ շինուած։

Անդարեաց պարտեզը. — ուր որ լեցուն ծաղիկ էր և լողացողները հոն կուգային ան քաղցը զովութիւնը ու հոտը

վայելելու համար . Հոն էր դարձեալ որ կրանատայի թագուհի մը Դպինխերաժի ցեղէն ասպետներէն մէկուն խնջուք տուաւ :

Երէու ժոյրերու սրահը . — որուն ասանկ կոչուելուն պատճառն է երկու հրաշալի Ճերմակ մարմարինէ կոնքերն , որ յատակին մէջ ագուցած են :

Ա երջապէս թագուհոյն զարդերուն թափառնը , որն որ զուարձալի բնակարան մընէ , Վումարէսինքովը , և ուսկից ամբողջ կրանատա կը տեսնուէր . Հոն կուգային նաև թագաւորք Դպտուծոյ շնորհակալ ըլլալու որ այնպիսի երջանիկ և գեղեցիկ երկրի մը վրայ զիրենք կը թագաւորեցընէ :

Դ լհամպրայի աս պալատը բոլորովին տարբեր է իր գեղեցիկ տեսքովը բոլոր ուրիշ միջնն գարու յիշատակներէն . իմաստուն ժողովրդեան մը հանձարը և ախորժակի փափկութիւնը կը տեսնուի ասոր մէջ :

Դ լհամպրայի Ճարտարապետութիւնը բոլորովին Հռովմէական է . իր գափիթները , սրահակները կամրակապները ու բաղնիքները , կարծես թէ Յուստինիանոսի ատեն շինուած , Դիւզանդացի ազնուականաց պալատներուն ոճովն են : Արահները ընդհանրապէս կլոր ու վրանաձե էին , և լցոր աւելի դուներէն կուգար , որոնք կերպասով գոցուած ըլլալով՝ քիչ անգամ կը բացուէին : Դարտարապետական մանր մասերը գոթացի ոճով յօրինուած են : Պատերուն և կամարներուն նկարները , ինչպէս վերն ալ ըսինք , Հնդկաց կերպասներուն և Հինաց յախճապակիներուն պէս էին : Դ լհամպրայի աղբիւրներուն տեղը ինչուան հիմա ալ գեռ կը կը գտնուին այնպիսի մնացորդներ , որ Հրէից և Բաբելոնի ու Արմենիա աւերակներուն հետ շատ նմանութիւն ունին : Պալատին մէջը ամեննեին արձան չգտնուիլը՝ նոր բան մը պիտի չսեպուի , երբոր մտածենք թէ ինչպէս Հրէայք՝ ասանկ ալ Վահմետականք մասնաւոր օրէնքով կը զգուշանային պատկերաց և արձաններու յարդ չտալ . բայց Դ լհամ


պրայի առիւծները իրենց կեցուածքին ծանրութեամբը և երեսներնուն վրայ ցրուցած կրքովը զարմանալի են , ևս առաւել այնպիսի ժամանակի մը համար :

Կարոլոս Եթագաւորը ուզելով Ապանիական Ճարտարապետութիւնը Վարիտանականին հետ բաղդատել , մեծածախ պալատ մը կանգնել տուաւ , Վարիտանացւոց թագաւորաց բնակարանին քով . բայց կարծես թէ ինքն ալ իմանալով թէ պատիկ ինկաւ , Վարիտանացւոց շինածը կործանել տուաւ և անոր աւերակներովը իրենը շինեց : Ամանք իրեն յաջորդներէն նոր ոճով զանազան սենեակներ զարդարեցին . բայց վերջապէս աս դարուս սկիզբները երբոր Դաղղիացիք ստիպեցան քանդել զիրանատա , Դ լհամպրայի դղեակը և բերդը հիմնայատակ կործանեցին . և այսօրուան օրս Վարիտանացւոց թագաւորաց պալատին մէջ մէկ քանի խեղճ զինուորներ , չղջիկներ ու որսի թըռչուններ կը բնակին :

Դ յապիսի աւերմունք և թշուառութիւններ մարդուս սրտին վրան մեծ ազգեցութիւն կ'ընեն , մանաւանդ երբոր յիշենք տեղւոյն հին փառքը և պայծառութիւնը : Հիմա աշտարակ մը միայն կայ , ուր կը տեսնուի դուռ մը , ուսկից գուրս ելաւ Պուապտիլ թագաւորը երբոր չեր կրնար մէյմ' ալ Վ լհամ պրա մտնալ , և ինդրեց որ 'ի յիշատակ իր աս խեղճութեանը՝ մէկն ալ չանցնի ան դունէն . ինդիրքը կատարուեցաւ , և այն բլրին վրայ զորն որ Ապանիացիք Վերջին շառնչ Մարդկանացոյ կը կոչեն քիչ մը կանկ առաւ Պուապտիլ՝ որպէս զի մէկ անգամ մ'ալ նայի իր քաղքին , պալատին , և թագաւորութեանը վրայ . Հոն զժբաղդ թագաւորը չկրցաւ ուրիշ բան ըսել , բայց եթէ “ Դպտուծոյ կամ քը կատարուի , ” :

Թագաւորին ցաւը բոլոր Վարիտանացի ժողովրդեան համար ալ էր , և որպէս զի Ապանիացւոց պէս յաղթական կերպով Արանատա մտնելը չտեսնե՝ հեռու տեղ մը քաշուեցաւ : Այն ցաւը և տրտմութիւնը ունեցան թէ Վ

փրիկեի և թէ Ապանիոյ Ո՞ւրիտունացիքը , սրոնք ՎԱՀամբայի կործանման վրայ արտասուելու կուգային , և իրենց անցեալ մեծութեանը վրայ կ'ողբային :



Միսիոն յԱհամպրա .

## ԲՆԱԿ ԱՆՔ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Քարերու մէջ փակուած ողջ կենդանիք<sup>1</sup> :

Վյու ամէն բանելու լսելէն ետև մեր բուն պատմութեանը գանք , որ է մատնաթե<sup>2</sup> կենդանւոյն նոր գիւտը : Իսայց յառաջ քան զամենայն պէտք է գիտնալ որ ատենով երկրիս երեսը շատ տեսակ կենդանիներ կային , հիմակուաններէն տարբեր , որոնց արդ կմախքները մնացեր են երկրիս այլ և այլ խորերն ու քարացած : Վյու խորհրդաւոր արարչութեան , զոր երկրիս փոփոխական պայմանը հետզէտէ անհետ ըրաւ Ծնջեց , կը վերաբերին շատ մը թեւաւոր սողուններ , որոնցիքը յետին և խոնարհ օրինակ մը հիմա մնացեր է միայն թըռ-

չուն վիշապը , որ ըստ քերթողի մը կոր է ուն զիւր համբաւ : Ոյեւաւոր սողնոց կարգէն կը սեպուի ուրեմն մատնաթեն ալ , որ շատ տեսակ է , ձեռով նման բայց մեծութեամբ տարբեր , և ըստ մասին չղջիան , ըստ մասին թռչնոյ ու ըստ մասին սողնոց կը նմանի , սակայն իր բնական յատկութիւնները մտադրութեամբ քննելով՝ կը տեսնենք որ առաջին երկու դասերէն կը հեռանայ ու երրորդին կը մօտենայ : Այս խսկ իր թեւերը ոչ առաջիններուն նման են և ոչ երկրորդներուն . առաջիններուն մատուցները , բայց 'ի բժամատէն , կ'երկըննան ու մաշկ մը կը տարածէն , որ մէկմէկու հետ կը միացընէ զանոնք ու թեւի տեղ կը բռնէ . երկրորդներուն մատուցները հազիւ թէ կ'երեան և իրարու կպած ամրութիւն կու տան փետուրներուն . խսկ մատնաթեւերուն մէկ մատը չափէ դուրս կ'երկըննայ և մաշկեղէն թեւն առած կը տարածէ , մէկալ մատուցները կարծ են և ազատ ու բան բռնելու կը ծառայէն : Վյոնց ակնակապիճներուն մեծութիւնը կը ցուցընէ թէ գիշերային կենդանիներ էին , ակուաներէն և ծամլեաց ձևէն կ'իմացուի թէ գիշակեր էին , և գուցէ պզտիկները միջամտներ կ'որսային , խսկ մեծերը՝ սողունք և ձկունք . մանաւանդ թէ աւելի սողունք , վասն զի վզերնին կարծ ըլլալով չէին կրնար քիչ մը խոր Ճահիճներու մէջ որ սալ : Վյոնք ցամաքային կենդանիներ ալ ըլլալով՝ թաթերնուն կազմութիւնն այնպէս որ թէ ծառերու վրայ կրնային կենալ թռչնոց պէս , և թէ ժայռերէ վեր մագլցի կրնային ելլել սողնոց պէս :

Ուստի թէ որ լրագրաց հաւատանք , այս տարի այն մեծամողէսներէն մէկ հատ մը արտէզիայի մը խորշէն ողջ դուրս ելեր և երթոր խումբ մը գործաւորք լիզն-լիզիէի և լանսիի երկաթողիներն իրարու հետ միացընելու համար քարաժայռեր կը կոտրէին : Վյոհի կենդանին , որ այնչափ հարիւրաւոր գարեր այն խաւարային մենարանին մէջ ողջ մնացեր էր , ոգ և լցոս տեսածին պէս մէկէն հոնտեղի աշխատաւորաց

<sup>1</sup> Տես երես 301 :

<sup>2</sup> Գլ. Պտերօնաւորաց